ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
23 ապրիլի 2020 թվականի N 17-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 50-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության 2020 թվականի ապրիլի 16-ի N 27.3/8133-2020 գրությամբ ստացված պետական փորձագիտական եզրակացությունը, ինչպես նաև համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 50-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող օրը:

կողմ-8 դեմ- 0 ձեռնպահ-0

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
ԳԱԼՈՅԱՆ ՖԵԼԻՔՍ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅԿ
ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՄԱՍԻՍ
ՄԿՐՏՉՅԱՆ ԱՇՈՏ
ՄԿՐՏՉՅԱՆ ՄՀԵՐ

Համայնքի ղեկավար Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մեծամոր համայնքի ավագանու
2020 թվականի ապրիլի 23-ի
N 17-Ն որոշման

2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Վարչական բյուջեի եկամտային մասում նախատեսել պետական բյուջեից հատկացում՝ այլ ընթացիկ դրամաշնորհ 22400,0 հազար դրամ, որպես նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ պայմանավորված ֆինանսական փոխհատուցում համայնքին:

Նախատեսել պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացում (սուբվենցիա) 3033.8 հազար դրամ՝ «Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսման վարձավճարի փոխհատուցում, այլ եկամուտների 1393 տողով՝ 720.0 հազար դրամ՝ որպես այլ ընտրանքային աշխատանքային ծառայության գումար:

Ֆոնդային բյուջեի եկամտային մասում նախատեսնել Մեծամոր համայնքի թիվ 8 և 23 շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքների սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորման մնացորդային գումարը 737,1 հազար դրամ:

Վարչական բյուջեի ծախսային մասում նախատեսել՝ «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ծրագրի բաժին 01, խումբ 1, դաս 1, 4212 հոդվածին 2300,0 հազար դրամ, 4229 հոդվածին 100,0 հազար դրամ, 4252 հոդվածին 500,0 հազար դրամ, 4267 հոդվածին 300,0 հազար դրամ, բաժին 01, խումբ 6, դաս 1, 4239 հոդվածին 500,0 հազար դրամ, 4252 հոդվածին 300,0 հազար դրամ, 4269 հոդվածին 400,0 հազար դրամ, 4823 հոդվածին 200,0 հազար դրամ, 4841 հոդվածին 500,0 հազար դրամ, «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն» ծրագրի բաժին 06, խումբ 1, դաս 1, 4251 հոդվածին 500,0 հազար դրամ, 4269 հոդվածին 500,0 հազար դրամ, 4511 հոդվածին 4520,0 հազար դրամ, բաժին 06, խումբ 3, դաս 1, 4213 հոդվածին 500,0 հազար դրամ, բաժին 06, խումբ 4, դաս 1, 4212 հոդվածին 2500,0 հազար դրամ, «Կրթություն» ծրագրի բաժին 09, խումբ 1, դաս 1, 4251 հոդվածին 500,0 հազար դրամ, 4269 հոդվածին 1000,0 հազար դրամ, «Թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածին 1500,0 հազար դրամ, «Թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածին 1200,0 հազար դրամ, «Թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածին 1300,0 հազար դրամ, բաժին 09, խումբ 5, դաս 1, «Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի 4637 հոդվածին՝ 3033,8 հազար դրամ, «Մեծամորի մարզադպրոց» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածին 1500,0 հազար դրամ, «Սոցիալական պաշտպանություն» ծրագրի բաժին 10, խումբ 7, դաս 1, 4267 հոդվածին՝ 500,0 հազար դրամ 4729 հոդվածին՝ 2000,0 հազար դրամ:

Ֆոնդային բյուջեի ծախսային մասում նախատեսել «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն» ծրագրի բաժին 06, խումբ 1, դաս 1 5113 հոդվածին 737,1 հազար դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Թադևոսյան